

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Առաջադրութեամբ թոյլ տուաց Աստրախանի առաջնորդին բանալ եկեղեցական–ժխական դպրոցներ Ներքին Լօս, Ներքին Շիլովկա, Վերին Լօս և Միխելբիպշ գիւղերում. 1 Մարտի թ. 2342.

Գրութիւն Կ. Պոլսի Հայոց ս. Պատրիարքի անունով Կիլիկիայի Տ. Սահակ կաթուղիկոսի Ամերիկայում տպուող «Կոչնակ» շաբաթաթերթում ամերիկահայերին ուղղած դիմումի մասին. 4 Մարտի թ. 2346.

Առաջադրութեամբ թոյլ տուաց Վրաստանի թեմի ժամ. կառավարչին կարգադրել թաղել Տէրտէրեան ամուսինների դիակները մահից յետոյ Ուրիաթուբան գիւղի եկեղեցու գաւթում, որին նուիրել են իրենց սեպհականութիւն կազմող գեռնատեղին եկեղեցուն կից. 4 Մարտի թ. 2347.

Առաջադրութեամբ յետ ուղարկուեց Սինոդ Մայր Աթոռի մատենադարանի 1912 թ. հաստատած նախահաշիւը՝ գործադրելու համար։ 5 Մարտի թ. 2351։

Առաջադրութեամբ վերադարձուեց Սինոդ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի կոնսիստորիայի, Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարութեան և Հին-Ղրիմի ս. Խաչ վանքի 1912 թ. հաստատած նախահաշիւները։ 9 Մարտի թ. 2354։

Առաջադրութիւն Վրաստանի ժամ. կառավարչի անունով, որով պ. Եսայի Եբրովեանը հաստատուեց Օձուն գիւղի եկեղեցական-ծխական հոգաբարձութեան պատուաւոր անդամ։ 12 Մարտի թ. 2359։

Առաջադրութեամբ ուղարկուեց Երևանի փոխ-թեմակալին Խնձորեակ գիւղի ծխ. հոգաբարձութեան զեկուցումը և պատուիրուեց բացատրութիւն տալ յիշեալ զեկուցման իւրաքանչիւր կէտի դիմաց։ 14 Մարտի թ. 2360։

Առաջադրութեամբ թոյլատրուեց Մայր Աթոռի ճեմարանի վարչութեան հանգուցեալ Ա. Ղուկասեանի կտակագումարի տոկոսով ուսանող հոգևորական սաների ընտրութեան մասին լրագրներում ծանուցում տպագրել։ 17 Մարտի թ. 2364։

Առաջադրութեամբ թոյլ տրուեց Ատրպատականի առաջնորդին բանալ Կուբանեան շրջանի Ռոմանովկա աւանում եկեղեցական-ծխական դպրոց։ 18 Մարտի թ. 2366։

Առաջադրութիւն Ատրպատականի առաջնորդի անունով, որի հետ ուղարկուեց ի գիտութիւն և ի տնօրէնութիւն Հին-Նախիջևանի հոգևոր կառավարութեան յայտարարութեան և այլ թղթերի պատճէնները՝ Դարաշամբի սբ. Ստեփաննոս Նախավկայի վանքի ձեռագիր մատեանները Էջմիածին տեղափոխելու մասին։ 29 Մարտի թ. 2373։

Զանգու գետից առու հանելու համար առաջադրուեց Սինոդին.

ա. Սինոդի կողմից ներկայացուցիչ կարգել Սինոդի

անդամ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին և պատուիրել նորին գերապատուութեան իւր նախագահութեամբ մի մասնաժողով կազմել Բագուի Ցանձնաժողովի և Վաղարշապատի, Զօրանքեարու և Ալիքէկլու գիւղերի լիազօրներից պաշտօնապէս ընտրուած մի մի ներկայացուցիչներից.

բ. Արտօնել Սինոդի ներկայացուցիչ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին, որ Վաղարշապատի, Զօրանքեարայի և Ալիքէկլուի պաշտօնապէս ընտրուած ու համախոհական վճռով արտօնուած լիազօրների հետ առանձին առանձին նօտարական պայման կապի, որ նրանք պարտաւորուած լինեն, իւրաքանչիւր գիւղին կառավարութիւնից յատուցուած ջրի քանակի համեմատ վճարել առուի բացման և շինութեան ծախքերը։

գ. որ Սինոդն ստանայ յիշեալ գիւղերի հասարակութիւնների լիազօրներից և Բագուի Ցանձնաժողովից առուի շինութեան ծախքը, պահի գումարը Մայր Աթոռի գանձարանում որպէս յատուկ գումար և պատուիրի գանձապահին մասնաժողովի նախագահի և անդամների ստորագրութեամբ ըստ չափու կարեաց հարկաւոր գումարը տալ հեռագիրով։ Պարտաւորել մասնաժողովին գործն աւարտելուց յետոյ ներկայացնել Ատենիդ մանրամասն հաշիւը, փաստաթղթերը, հաշուեմատեանները, բոլոր թղթերն ու մակարդակները։ 2 Ապրիլի թ. 2374։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Թ. 141. Մարտի 6-ին Սինոդը լսել Երևանի կոնսիստորիայի անցեալ 1911 թ. Դեկտեմբերի 31-ի թ. 9392 յայտարարութիւնը Կարսի շրջանի Նոր-Թիքնիզ գիւղացի Պետրոս Պետրոսեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Պետրոս Պետրոսեանցին և յանձնարարել փոխ-թեմակալին ձեռնադրել նորան քահանայ Նոր-Թիքնիզ գիւղի համար։